ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

ԳԼՈԲԱԼ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԲՆԱԿԱՆ ԿԵՐՀԱՆԴԱԿՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՎԱԾ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

gef SGP The GEF Small Grants Programme The Bahamas
UNDP
Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra
Federal Department of Foreign Affairs FDFA
Swiss Agency for Development and Cooperation SDC
SDA Strategic Development Agency
Strategies for Development

Մարդկության զարգացման պատմության ողջ ընթացքում մարդու գործունեությունը անմիջականորեն կապված է եղել բնական միջավայրի հետ: Բայց մարդկության զարգացման այս փուլում, որը բնորոշվում է արդյունաբերության ինտենսիվության կտրուկ աճով և նորագույն տեխնոլոգիաների ի հայտ գալով, այնքան է մեծացել մարդու ազդեցությունը բնության վրա, որ հանգեցրել է բնական համակարգերի զանգվածային քայքայման և մարդկությանը կանգնեցրել բնապահպանական ճգնաժամի վտանգի առաջ:

Ժամանակակից բնապահպանական վտանգներն իրենց մեջ ներառում են համամոլորակային և տեղական բնապահպանական մարտահրավերներ, որոնց զուգորդումը տեղական մակարդակում առաջացնում են լուրջ սոցիալական, տնտեսական, առողջապահական և բնապահպանական հիմնախնդիրներ: Մարդկային հասարակության անընդհատ աճող պահանջմունքների և բնական միջավայրի ինքնավերականգնման հնարավորությունների միջև առկա հակասությունը հանգեցրել է մի շարք գլոբալ բնապահպանական հիմնախնդիրների առաջացման:

8.Արգելել վաղ գարնանային և ուշ աշնանային արածեցումը, քանի որ առավելապես այդ ժամանակահատվածներում է արոտների բուսականությունը առավել խոցելի և հետագայում դժվարությամբ է վերականգնվում:
9.Սահմանել նախիրների և հոտերի կազմման թվային սահմանափակում՝ ԽԵԿ-երի նախիրը չպետք է կազմվի 150 գլխից ավելի կենդանիներից, իսկ ոչխարներինը՝ 200 գլխից ավելի: Սրանից մեծ կենդանախմբերը ուժեղացնում են արածեցման բացասական ազդեցությունը բուսածածկույթի և հողի վրա:
10.Ազատ կամ անհամակարգ արածեցման եղանակից, անցնել կենդանիների արածեցման հերթական կամ արոտաբաժնային եղանակին, որը մոտ 25-30%-ով կրճատում է արածեցման բացասական ազդեցությունը և բարձրացնում է արոտավայրերի օգտագործման արդյունավետությունը:
11.Հերթափոխային (համակարգված) արածեցման դեպքում ընդհանուր արոտատարածքը համաձայն գործող կարգի բաժանել սահմանված թվով արոտավանդակների և խստիվ հետևել դրանց օգտագործման ժամկետներին և նորմերին:
12.Արոտավայրերում սահմանել կենդանիների տեղաշարժման օպտիմալ երթուղիներ, քանի որ կենդանիների երկարատև հերթաշար և ուղղագիծ տեղաշարժերը պատճառ են դառնում բուսածածկույթի ոչնչացման և հողի էրոզիայի (նախրաքաշեր և ոտնահարային գուղձերի առաջացում):
13.Արոտավայրերի երկարաժամկետ, կայուն և առավել արդյունավետ կառավարման նպատակով կազմել «Արոտների կայուն կառավարման պլան», որը մանրամասն սահմանում է արոտների օգտագործման կարգը, ձևը և ռեժիմը, ինչպես նաև արոտաշրջանառության իրականացման կարգը:



Առավել խոցելի են կիսաանապատային, ալպյան և ենթալպյան գոտիներում գտնվող կերհանդակները: Որքան դրանց տեղադիրքը բարձր է և ռելիեֆը թեք, այնքան մեծ է դրանց խոցելիության աստիճանը:

Կլիմայի փոփոխության հետևանքով Հայաստանում հաճախակի են դարձել գյուղատնտեսության ոլորտի համար անցանկալի այնպիսի երևույթները, ինչպիսիք են՝ երկարատև երաշտները, սաստիկ շոգերն ու էկոհամակարգերի արտակարգ հրդեհավտանգությունը, վաղ գարնանային ցրտահարությունները, կարկտահարությունները, երկարատև հորդառատ անձրևները, վարարումներն ու սելավները, սառնամանիքների սաստկացումը, ուժեղ ձյունը, բուքը, մերկասառույցն ու մառախուղները, ինչպես նաև ուժեղ քամիներն ու պտտահողմերը:

Հայաստանի գյուղատնտեսական հողահանդակների գրեթե 60%-ը կազմում են բնական կերհանդակները՝ խոտածածկ տարածքներ, որոնք ըստ օգտագործման ձևի բաժանվում են խոտհարքների և արոտավայրերի: Բնական կերհանդակների շնորհիվ է, որ մեր երկրում զարգացած է անասնապահությունը:

Բնապահպանական տեսակետից կերհանդակների սխալ կառավարումը էական բացասական ազդեցություն է թողնում Հայաստանի արոտավայրերի և խոտհարքների վիճակի վրա:

Կերհանդակների կառավարման գործընթացներում տեղ գտած առավել տարածված թերություններից են՝ արոտների գերծանրաբեռնումը կենդանիների մեծ գլխաքանակով, արածեցման ժամկետների խախտումները, համայնքին հասանելի արոտավայրերի անհամաչափ օգտագործումը, կենդանիների խմբերի կազմման թվային սահմանափակումների և տեղափոխման օպտիմալ երթուղիների բացակայությունը, տարբեր կենդանատեսակների արածեցման հերթականության խախտումները, ջրելատեղերի և մակատեղերի ոչ ճիշտ ընտրությունը, ծանր տեխնիկաների և մեքենաների անկառավարելի տեղաշարժերը կերհանդակներում, խոտհնձի ժամկետների խախտումները, բուսածածկույթի տարբեր տիպերի հնձի հերթականությունը չպահպանելը, խոտհնձի բարձրության խախտումները, ոչ նպատակահարմար տեխնիկաների և կցասարքերի կիրառությունը, հնձից հետո տարածքը արածեցման համար օգտագործելու ժամկետների խախտումը, խոզանի այրումը և այլն:

Կառավարման այս բացթողումները հանգեցնում են կերհանդակներում վտանգավոր բնապահպանական ազդեցությունների առաջացման՝ հողերի դեգրադացիայի ու անապատացման, ինչպես նաև կենսաբազմազանության նվազման ու խոցելի տեսակների ոչնչացման: Գերշահագործման արդյունքում կերհանդակների հողը պնդանում է, զրկվում է բուսածածկույթից, ակտիվանում են հողմային և ջրային էրոզիաները, ձնհալը և ուժեղ անձրևները լվանում են թեք լանջերի բերրի հողաշերտը և դրանք վերածում անապատացված լերկ տարածքների:

Կերհանդակների կառավարման վրա ազդող բացասական գործոններից են նաև դրանց իրական վիճակի վերաբերյալ տեղեկատվության և կառավարման պլանների բացակայությունը, պարարտացման և վնասատուների դեմ պայքարի միջոցառումները, ինչպես նաև ագրոմելիորատիվ և ոռոգման աշխատանքներ չիրականացնելը:

Պետք է հիշել, որ բնական կերհանդակները, բացի մարդու տնտեսական գործունեության համար կարևոր նշանակություն ունենալուց, հանդիսանում են նաև արժեքավոր էկոհամակարգեր, որոնք բնութագրվում են իրենց ուրույն կենսաբազմազանությամբ և կարևորագույն դեր ունեն բուսատեսակների և կենդանատեսակների պահպանության և վերարտադրության գործում:

Կերհանդակների չկանոնակարգված օգտագործումը լի է մի շարք վտանգներով, որոնք կարող են մեծ վնաս հասցնել բնական էկոհամակարգերին և հազվագյուտ բուսատեսակների և կենդանատեսակների ոչնչացման պատճառ դառնալ:

Այս պայմաններում էապես կարևորվում է խոտհարքների և արոտավայրերի կանոնակարգված օգտագործումը, քանի որ արդյունքում բարձրանում է դրանց տնտեսական արդյունավետությունը: Կերհանդակների ճիշտ կառավարման դեպքում մոտավորապես 1,5-2 անգամ բարձրանում է դրանց բերքատվությունը և նվազում են հնարավոր բնապահպանական ռիսկերը:



Կերհանդակների կանոնակարգված օգտագործման համար անհրաժեշտ է.

1.Սահմանել արոտավայրերում արածեցվող կենդանիների թույլատրելի խտությունը համաձայն սահմանված կարգի (ՀՀ կառավարության 14.04.2011թ. N՝ 389-Ն որոշում):
2.Ոչխարների և այծերի արածեցումը պահել խիստ հսկողության տակ, քանի որ վերջիններս էական բացասական ազդեցություն են գործում արոտավայրի հողածածկի վրա: Մանր եղջերավորների կճղակների ազդեցությամբ արոտավայրի հողածածկը ենթարկվում է ուժեղ ճնշման, բացի այդ, արոտավայրի միավոր տարածքի վրա նույն ժամանակահատվածում թողնում են կրկնակի անգամ ավելի խիտ ոտնահարում, քան ձիերն ու խոշոր եղջերավորները:
3.Արածեցվող կենդանիների մակատեղերը սահմանել համաձայն վերը նշված կարգի պահանջների:
4.Կտրտված ռելիեֆի պայմաններում կերահանդակների տարբեր հատվածներում բուսական համակեցություններն ունեն տարբեր վեգետացիայի տևողություն, այդ պատճառով անհրաժեշտ է յուրաքանչյուր հատվածի համար սահմանել արածեցման և խոտհնձի տարբեր ժամկետներ:
5.Հստակեցնել ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների և կենդանատեսակների տարածման արեալները կերհանդակների տարածքներում և այդ հատվածներում արածեցումըև խոտհունձը կամ ընդհանրապես արգելել, կամ կազմակերպել ագրոբնապահպանների անմիջական հսկողության պայմաններում:
6.Դադարեցնել 30-35°-ից ավելի բարձր թեքություն ունեցող լանջերի արածեցումը խոնավ եղանակներին, անկախ կենդանատեսակից և տարվա ժամանակից, հողի էրոզիոն գործընթացները և բուսական համակեցությունների ոչնչացումը կանխարգելելու նպատակով:
7.Հստակեցնել արոտների օգտագործման ժամկետներն ու տևողությունը, ելնելով տվյալ տարածքի արոտների և այդ տարվա բնակլիմայական պայմանների առանձնահատկություններից:

Այսօր մարդկության համար առավել կարևոր են համարվում հետևյալ գլոբալ բնապահպանական հիմնախնդիրները.

* **Կլիմայի գլոբալ փոփոխություն**:
* **Հողերի դեգրադացիա և անապատացում**:
* **Կենսաբազմազանության նվազում և խոցելի տեսակների ոչնչացում**:
* **Քաղցրահամ ջրի պակաս և ջրային պաշարների սակավություն**:
* **Բնական միջավայրի բաղադրիչների քայքայում և աղտոտում**:
* **Չքայքայվող թափոնների կառավարման խնդիրներ**:
* **Օզոնային շերտի քայքայում և անցքերի առաջացում**:
* **Ջանգվածային անտառահատումներ**:
* **Համաշխարհային օվկիանոսի աղտոտում**:

Թվարկված հիմնախնդիրներից առավել հրատապ են և Հայաստանում բնական կերհանդակների կառավարման խնդիրների հետ ուղղակի առնչություն ունեն՝ կլիմայի փոփոխությունը, հողերի դեգրադացիան և անապատացումը, ինչպես նաև կենսաբազմազանության նվազումն ու խոցելի տեսակների ոչնչացումը:

Մեր երկիրն ունի չոր մերձարևադարձային կլիմա, որտեղ կլիմայական համակարգը ձևավորվում է ուղղահայաց գոտիականությամբ և կլիմայի նույնիսկ չնչին տատանումները էկոհամակարգերում առաջացնում են զգալի փոփոխություններ:

Դիտարկումները ցույց են տալիս, որ Հայաստանում միջին ջերմաստիճանի փոփոխությունը 1935-2012թթ. ընթացքում կազմում է +1,03°C, իսկ տեղումների քանակը նույն ժամանակահատվածում նվազել է մոտ 10%-ով

Սա էլ ավելի խոցելի է դարձնում Հայաստանի բնական կերհանդակները, որոնք, ըստ էության, հանդիսանում են բավականին փխրուն էկոհամակարգեր: Կախված դրանց գտնվելու վայրից, բնական գոտիականությունից և ռելիեֆային պայմաններից, դրանց խոցելիությունը էականորեն փոփոխվում է: